ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ

Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գևորգը չափազանց համեստ մարդ էր*։ Նա չէր սիրում իր մասին խոսել և չէր կարողանում հանդուրժել, երբ իրեն գովում էին։ Մարդկանց հետ հարաբերություններում ծայր աստիճանի պարզ և ուղղամիտ էր, իշխանություն ցույց տալու կամ ձևամոլության, քաղաքական ճամարտակությունների ու բանսարկությունների համոզված թշնամի էր, տանել չէր կարողանում «կուսակցություններ խաղացող» եսասերներին։ Մինչև Սերոբի Սասուն գալը լեռնաշխարհում հայդուկների ղեկավարը Գևորգն էր, բայց նա սիրով իր տեղը զիջեց Սերոբին։ Նա զինվոր էր, մարտիկ և իր կյանքի նպատակն էր համարում հետևյալը. լաո, լիներ Հայաստան, ես բոստան ցանեի, դու հյուր գայիր, և ես վարունգ հյուրասիրեի։ Նա չէր սիրում, երբ իր մասին երգեր էին հնարում և ասում էր. «Իմ վրա երգեր մի կապեք։ Ես բոստանչու աղա բոստանչի եմ։ Ինձ բահ տվեք»[1]։ Ահա մի պատառիկ Գևորգի փիլիսոփայությունից. «Շատերը հարցնում են, թե խմբերով լեռներն ընկնելով և հեղափոխություն կատարելով ազգ կազատվի՞։

Ազգի ազատությունը դյուրին գործ է, եթե սուտ հույս չդնեք հանգիստ կյանքի վրա, որ չունեք, քանի որ թուրքի ձեռքի տակ եք և չխաբվեք հարբստությունների, որը ձերը չէ։

Մտածեք, որ մեր կյանքը կարճ է, շատերը մեռնում են չծնված. շատերը՝ խելքի չեկած ու աշխարհ չտեսած։ Տեսնողներն էլ ապրում են շատ-շատ 50—60 կամ 70 տարի։ Երբ էլ լինի՝ մեռնելու ենք։ Բայց, եթե չսպասենք աստծո կամքին և ուզենանք մեր կամքով մեռնել՝ այն ժամանակ կազատվենք։ Աստված մեզ ազատում է մարդ արարածի կենաց տանջանքից, իսկ մարդը իրեն ազատում է մարդու փորձանքից...

Թե որ բոլոր հայերը երեկոյան ուխտ անեն մեռնել, առավոտյան արևը դեռ չծագած՝ ազատ են»[2]։

Երբ կռվի մեջ չէր, Գևորգն աշխարհի ամենախաղաղ ու ամենահամեստ մարդն էր, իսկ երբ կռիվ էր, նա կերպարանափոխվում էր։ Կռվում նա տիրակալ էր, առյուծ, որի կեցվածքը բոլորին հարկադրում էր ենթարկվել։

Նա նեղ օրվա, չարքաշ կյանքի մարդ էր։ Օրերով սոված ու ծարավ էր մնում, անմռունչ դիմանում սառնամանիքներին, բնության բոլոր արհավիրքներին և, երբ ընկերները չէին դիմանում ու տրտնջում էին, ասում էր. «Հայդուկի բախտն է այդպես։ Եթե հայդուկ ես, դիմացիր»։

Գևորգը համընդհանուր հարգանք ու սեր էր վայելում։

1899 թ. ձմռանը թուրքական իշխանությունները ստոր միջոցներով դավադրաբար սպանեցին Սերոբին։ Այդ լուրը ստանալով, Գելիեգուզան են շտապում Անդրանիկն ու Գևորգը։ Նրանք նախ սպանում են դավադրության անմիջական իրականացնողին՝ Գեղաշենի ռես Ավեին, իսկ ապա դավադրության կազմակերպչին՝ Բշարա Խալիլին[3]։

Գևորգը պարտիզանական կռիվների տաղանդավոր կազմակերպիչն էր։ Ահա այդ միտքը հաստատող բազմաթիվ օրինակներից մեկը։ Մի անգամ Գևորգը հիվանդ էր և որոշում է գիշերն անցկացնել Բերդակ գյուղում։ Առավոտ

---

* Հոդվածի սկիզբը տե՛ս ամսագրի 1989 թ. № 6-ում։

1 Ա վ ո, Գևորգ Չաուշ, Գեյրութ, 1972, էջ 114։

2 Նույն տեղում, էջ 162։

3 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Գեյրութ, 1932, էջ 58—59։

վաղ գյուղը շրջապատվում է։ Հայդուկները մարտի մեջ են մտնում։ Նրանք թշնամու հարվածները հետ մղելով աննկատ քաշվում են գյուղի հետնամաս, դիրքեր գրավում ու կռիվը շարունակում։ Հայդուկները կռվելով նահանջում էին։ Այդպես նրանք մինչև երեկո կտրում են 20 կմ ու հասնում Ծիրին-Կատար։ Հայդուկները մոտենում են Կորեկի աղբյուրին և մառախլապատ եղանակից օգտվելով, անհետանում։

Մուշից մեծ քանակությամբ մարդիկ էին եկել՝ տեսնելու չորս հայդուկի կռիվը բազմաթիվ թշնամիների դեմ։

Բերդակում Գևորգը մի քանի կռիվներ է ունեցել և գյուղին կից ժայռը ստացել էր «Գևորգի քար» անունը։

Ծիրին-Կատարում Գևորգին լուր են բերում, որ Հրայրը Շենիկում ժողով է հավաքել, հայդուկներին զինաթափել, իսկ Անդրանիկից պահանջել է հեռանալ Սասունից։ Հաջորդ օրը նա գնում է Սեմալ։ Այստեղ նրա հետ հանդիպելու են գալիս զինաթափ արված հայդուկները։ Գելիեգուզանում հայդուկները ժողով են գումարում և Գևորգի առաջարկությամբ Անդրանիկն ընտրվում է հայդուկապետ։ Անդրանիկը պատմում է. «1910 թ. հոկտեմբերին Գելիեգուզան գյուղում մեր զինվորների գաղտնի ժողով-խորհրդակցություն գումարեցինք։ Ես, Գևորգը, Հարությունը, Վաղարշակը և Հաջի Հակոբը։ Մեր խորհրդակցության նպատակն էր միջոց և ուղի գտնել հայ ժողովրդի վրա ծանրացող տագնապը մեղմելու և թուրքական ու քրդական հարստահարությունները ու հալածանքները դադարեցնելու...»[4]։ Նրանք որոշում են ձմեռն անցկացնել Առաքելոց վանքում, Մուշ քաղաքից 8 կմ հեռավորության վրա։ Այս ակտի հոգեբանական ազդեցությունը հասկանալի է՝ հայդուկները պետք է իրենց շատ ուժեղ զգային, որպեսզի համարձակվեին Առաքելոց վանքում ձմեռել։ Տակտիկական տեսակետից տրամաբանությունը հետևյալն էր։ Առաքելոց վանքը բարձունքի վրա էր, ուներ ամուր պարիսպներ և մոտ էր Մուշ քաղաքին ու Դաշտի գյուղերին, որ հնարավորություն էր տալիս լուծելու սննդամթերքի, զենքի անհրաժեշտ պաշարների կուտակման հարցը։ Անդրանիկն ու Գևորգը մոտ 40 հայդուկներով 1901 թ. նոյեմբերի 3-ին մտնում են վանք[5]։ Մի քանի օր հետո վանք են մտնում ևս 20 հայդուկ։

Նոյեմբերի 7-ին թուրքական երեք հազարանոց մի զորաբանակ Սալեհ փաշայի գլխավորությամբ շրջապատում է վանքը, այն կտրելով դրսի աշխարհից։ Վանքը պաշարելով թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ հայդուկների սննդամթերքը շուտով սպառվելու է, իսկ սառնամանիքին նրանք չէին կարողանալու ճեղքել պաշարման շղթան ու հեռանալ։ Այսինքն՝ նրանք դատապարտված են սովամահության կամ գերության։ Թուրքերն այդպես էին մտածում, իսկ «Գևորգը,—գրում է Անդրանիկը,—ամեն օր վանքի դպրոցի աշակերտներին հանում էր բարձր տանիքը՝ բերդ խաղալու. հաճախ ինքն էլ էր մասնակցում։ Երեք կողմից թուրքերի արձակած գնդակները ըլփ-ըլփ կպչում, մխրճվում էին տանիքի թաց հողի մեջ և կամ խաղացողների գլուխների վրայով ֆսթ-ֆսթ սուլոցով անցնում գնում՝ հաճույք պատճառելով չարաճճի աշակերտներին»[6]։ Գևորգն այդ անելով նպատակ ուներ «թշնամուն զգացնել, որ վանքում գտնվողները որևէ մտահոգություն չունեն և միաժամանակ զինվորների մեջ հոգեբեկում առաջացնել և նրանց դիմադրական կորովը թուլացնել»[7]։

Գևորգը նաև ամեն ինչ անում էր պաշարված հայդուկների, որբերի, ուսուցիչների ու վանքի մյուս ծառայողների տրամադրությունը բարձրացնելու համար։ «Թուրք զինվորներից ոմանք իրենց գետնափոր դիրքերից քարերի

---

[4] Լ. Լյուլեճյան, Անդրանիկի բերնով, Առաքելոց վանքի կռիվը և Խալիլ բեյի սպանությունը. Պեյրութ, 1966, էջ 6։

[5] Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 62։

[6] Ն. վ ր, նշվ. աշխ., էջ 137—138։

[7] Նույն տեղում, էջ 138։

արանքով սողալով իջնում են ներքև, գոմի հետևում թաքնվում և նշան բռնելով - կրակում։ Երբ նրանցից որևէ մեկը գլուխը բարձրացնում էր ու նրա ֆեսը երևում էր, Գևորգը կրակում էր։ Ֆեսը թռչում էր վեր, որն ուղեկցվում էր պաշարվածների ուրախ բացականչություններով ու ծիծաղով։

Նման դեպքերում Գևորգն ըստ սովորության բացականչում էր. «Հլ, հլ, ես Գևորգն եմ»։ Իսկ գոմի հետևից լսվում էր թուրք զինվորների ձայնը. «Այդ դու՞ ես, Գևորգ Չաուշ»[8]։

Նոյեմբերի 19-ի գիշերը թուրքերը երեք կողմից հարձակման անցան։ Մառախուղ էր։ «Անմոռանալի էջ է զարհուրելի գիշերվա այն դյուցազնական դրվագը,—գրում է Անդրանիկը,—երբ ...հանկարծ ասացին, որ չարիքին հաջողվել է մոտենալ վանքին և պատրաստվում էր ներս խուժել, Գևորգը մի քանի՝ կտրիճների հետ դուրս եկավ դեպի Հավատորիկ և հազիվ տաս համազարկ փոխանցելուց հետո, թշնամին ետ քաշվեց և մինչև վերջը որոշ հեռավորությունից առաջ չեկավ»[9]։

Առաքելոց վանքի կռիվը շփոթություն առաջացրեց Յլդրզում։ Դրանով սկսեցին հետաքրքրվել օտար պետությունները։ Սուլթան Համիդի հեռագրերը պահանջում էին բոլոր միջոցներով վերջացնել այդ խայտառակությունը[10]։ Թուրքական հրամանատարությունը հայդուկներին բանակցությունների առաջարկություն արեց։ Պաշարվածները հարկադրված էին ընդունել այդ առաջարկը, որովհետև երկու օրվա վառոդ ու փամփուշտ էր մնացել, ուտելիք չկար։ «Այն օրը,—գրում է Անդրանիկը,—որ մենք իրենց նամակին պատասխանեցինք՝ թող գան, իսկույն վանքի առաջնորդարանը մաքրեցինք և մոմերի դատարկ սնդուկները բերեցինք ու առաջնորդարանի մեջ իրար վրա շարեցինք՝ վրայի միայն 4—5 սնդուկները փամփուշտներ լցնելով։ Փամփուշտի այդ սնդուկների մոտ ցիրուցան գցեցինք փամփուշտ լցնող գործիքներ, անգլիական և տեղական վառոդների տոպրակներ ու արկղեր...»[11]։

Նոյեմբերի 23-ին թուրքական պատվիրակները վանք մտան։ Անդրանիկի կողմից ներկայացրած պահանջները հիմնականում հանգում էին բարենորոգումների մայիսյան ծրագրի կենսագործմանը։ Մինչ Պոլսից պատասխանի ստացվելը զինադադար հայտարարվեց։ Օգտվելով դրանից, հայդուկներն առանց պատասխանի սպասելու, նախապատրաստվեցին և նոյեմբերի 27-ի գիշերը վանքից հեռացան։ «Անսպասելի, գրեթե գերբնական է այս փախուստը, որն առասպելական գույն ստացավ և ֆիդայիները եղան անխոցելի և անընմբռնելի ժողովրդի երևակայության մեջ...

Ժողովուրդը դուրս է գալիս վհատության հեղձուկ խավարից և իր հոգու խորքում գտնում է ապրելու կամք և պայքարի արիություն...»[12]։ Ֆրանսիական «Օրորը» գրեց. «Աղերսանքներով Եվրոպային դիմելուց հետո հայերն այժմ ուրիշ տոնով են ուզում խոսել նրա հետ։ Այժմ նրանք ավելի մեծ շանս ունեն ուշադրություն գրավելու»[13]։

Առաքելոց վանքի կռիվը մեկ անգամ ևս հաստատեց այն ճշմարտությունը, որ Օսմանյան կայսրությունում փոքր ժողովուրդներն ապրելու և գոյատևելու միայն մեկ ուղի ունեին՝ զենքը ձեռքին մաքառել այդ իրավունքի՝ հարատևելու համար։ Գևորգը գրեց. «Սասունը հեղաշրջված էր, ինքնավստահության և դիմադրության հոսանքը վերստին գրավում էր իր տեղը»[14]։

Առաքելոց վանքի կռվից մեկ ամիս հետո թուրքական ուժերի դեմ Գևորգը փայլուն հաղթանակ տարավ Նորաշեն գյուղում։ Այդ կռիվներն էլ ավելի

---

8 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 66։

9 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 140։

10 Կ. Ս ա ս ո ւ ն ի, Սարերու Ասլանը, Պեյրութ, 1966, էջ 318։

11 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 143։

12 Ազգային հերոս զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Փարիզ, 1953, էջ 18։

13 Դրոշակ, 1901, № 9։

14 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 189։

բարձրացրին հայդուկների հեղինակությունը։ Հրայրը զգում էր, որ դաշնակցականների նկատմամբ հետաքրքրությունը թուլանում էր. երևան էր եկել մեկուսացման վտանգը։ Այս պայմաններում թե՛ Հրայրն ու Հաչի Հակոբը. թե՛ Կորյունն ու Վարդան վարդապետը կարծում էին, որ պետք է հայդուկների հետ համագործակցել։ Նրանք Անդրանիկին ու Գևորգին հաշտության ձեռք մեկնեցին։ Սակայն այս վիճակը Թիֆլիսում նստած դաշնակ ղեկավարներին անհանդուրժելի թվաց։ Եվ նրանք 1902 թ. Սասուն ուղարկեցին իրենց կուսակցության ակտիվ գործիչներից Վահան Տոզրամաճյանին։ Տեղ հասնելուց հետո նրա առաջին գործը եղավ Գևորգին Սասունից արտաքսելը[15]։ Գևորգը մեկնեց Վան, իսկ այնտեղից բարձրացավ Սիփանի լանջերը։ Նա այստեղ ձևավորեց մի զինված խումբ և շրջում էր Արճեշի գյուղերով, որտեղ տեր ու տիրական էր Քոռ Հուսեին փաշան։

Գևորգի արտաքսումը թե՛ Սասունում և թե Տարոնում առաջ բերեց բուռն դժգոհություն։ Մասնավորապես, ըմբոստացան տալվորիկցիները, որոնք սպառնացին Գևորգին չվերադարձնելու դեպքում ֆիզիկապես ոչնչացնել Վահանին։ Վահանն ընկրկեց և հին ֆիդայիների մի մեծ խումբ շարժվեց դեպի արևելք՝ Գևորգին դիմավորելու համար։

1894—96 թթ. կոտորածներից հետո սուլթանը փոխեց հայերի բնաջնջման մեթոդները։ Զանգվածային կոտորածներին փոխարինելու եկան Հայկական հարցի լուծման այնպիսի մեթոդներ, ինչպիսիք էին մշտական ճնշումները, մասնավորապես հայերի ունեցվածքի ու հողերի բռնագրավումը, նրանց տնտեսական քայքայումն ու արտահոսքը, կրոնափոխությունն ու ուծացումը, ոչ խմբային սպանություններն ու կյանքի անապահովությունը։ Սակայն դարի սկզբներին սուլթանին այդ մեթոդներն այլևս չէին բավարարում։ Նա նորից արյան գետերի էր տենչում։ Դրա ազդանշանը դարձավ Սպաղանքի կոտորածը, երբ ամենասադիստական ու ամենաայլանդակ մեթոդներով բնաջնջվեց գյուղի բնակչության ճնշող մեծամասնությունը։

Թուրքական իշխանությունները նախապատրաստական աշխատանքներ սկսեցին նորից Սասունի վրա հարձակվելու և այն հայերից դատարկելու համար։ Այդ աշխատանքները տևեցին երկու տարի և ավարտվեցին 1903 թ. աշնանը։ Թուրքական 10 հազարանոց մի բանակ դիրքեր գրավեց Մուշ քաղաքի հարավային շրջաններում։ Թուրքական զորաջոկատներն աստիճանաբար թափանցեցին Սասուն և իրենց ձեռքը վերցրեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող կետերը։ Թուրքական երկու վաշտ տեղավորվեց Շենիկ և Սեմալ գյուղերում և հսկողության տակ վերցրեց Սասունի դռները։ Հետո այդ զորքերի թիվը զգալիորեն ավելացավ, ինչը գործնականում անհնար դարձրեց հայդուկների ազատ տեղաշարժերը նույնիսկ բուն Սասունում։ Ստեղծվեց վտանգավոր վիճակ։ Գևորգն այդ լավ էր հասկանում և որոշեց ինչ գնով էլ լինի թուրքերին դուրս շպրտել Սեմալից։ Նա Սեմալի զինված խմբերին հանձնարարեց դիրքեր գրավել և կրակ բացել թուրքական զորամասերի վրա, իսկ ինքն իր ջոկատով շրջանցեց այդ զորամասերի թիկունքը և շեշտակի հարձակման անցավ։ Թուրքական զորամասերը, առանց լուրջ դիմադրություն ցույց տալու, նահանջեցին դեպի Կուրտիկ։

Այդ օրերին դաշնակցականները հայդուկային շարժման ղեկավարներից պահանջում էին ուժերը կենտրոնացնել Սասունում, հրաժարվել պարտիզանական պայքարից ու ճակատամարտ տալ թուրքական բանակների դեմ։ Սասունում թուրքերին հասցվող հարվածի ուժը մեծացնելու նպատակով նրանք Դաշտի գյուղերից ու մերձակա շրջաններից զգալի թվով ջոկատներ տեղափոխեցին լեռնաշխարհ։ Անդրանիկն ու Գևորգը վճռականապես դեմ էին այդ գործելակերպին։ Նրանք գտնում էին, որ ուժերի մի վայրում կենտրոնացնելը և թուրքական բանակի հետ ընդհանուր ճակատամարտ տալը նշանակում էր հարցականի տակ դնել ոչ միայն հայդուկների, այլև Սասունի բնակչության գոյությունը։ Դրա համար էլ նրանք մերժեցին դաշնակցականների

15 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 340։

ծրագիրը։ «Կարող ենք մեր ամբողջ ուժերը մի որևէ վայրում նետել Հակատամարտի մեջ,—ասում էր Անդրանիկը,—բայց տևական դիրքային կռիվը մեր ուժերը կսպառի։ Պետք չէ, որ նույն տեղը մնանք, մեր ուժերը քիչ են և նրանց խմբական ու հարվածային քայլերը կարող են թշնամուն շփոթի մատնել։ Այս գործելակերպը պետք է որդեգրենք, բայց առայժմս մնանք Սասնո սահմանների մեջ»[16]։ Նույն կարծիքին էր նաև Գևորգը. «Շեշտակի հարվածներ պետք է տանք թշնամուն և շատ հաճախ փորձենք նրա թիկունքը անցնել։ Մենք մեր արագաշարժությամբ կարող ենք շփոթի մատնել թուրքական բանակի շարքերը, քանի որ 10 հազարի հասնող մի զանգված պիտի մտնի այս լեռների և ձորերի մեջ»[17]։

Զեռնարկելով ինքնապաշտպանական կռիվներ, հայդուկները չէին կարող անուշադրության մատնել և որոշակի վարքագիծ չդրսևորել քրդերի նկատմամբ։ Ի տարբերություն դաշնակցական որոշ լիդերների այն պնդմանը, թե հայ-քրդական միությունն անհնար է[18], հայդուկների ղեկավարությունն այդ միությունը համարում էր ոչ միայն հնարավոր, այլ նաև կենսական։ Անդրանիկն ու Գևորգը շանում էին, որ «հայկական պահանջը ընթանա տեղական ժողովուրդների պահանջների հետ ներդաշնակ...»[19]։

Քրդերի շրջանում հատկապես ակտիվ գործունեություն էր ծավալում Գևորգը։ Նա ձգտում էր միավորել հայ և քուրդ ժողովուրդների ուժերն օսմանյան բռնատիրության դեմ։ Նա ցեղապետերի հետ «շատ հաճախ խորհրդակցում էր և նրանց օգնությամբ հաջողացնում էր քուրդ ժողովրդի մեջ ևս հեղաշրջում առաջ բերել, որպեսզի հայերի հետ միասին բողոքներ ներկայացնեն օսմանյան կառավարության կեղծարար պաշտոնյաներու դեմ, հարկ եղած դեպքում, զենքի զորությամբ միասնաբար պաշտպանեին երկու եղբայրացած ազգերի կենսական իրավունքները»[20]։ Սակայն սուլթանական կառավարությունը կարողացավ աղաների, շեյխերի, բեկերի ու ցեղապետերի միջոցով քրդերին հարձակման տանել հայերի վրա։ Հայկական հարցի ամբողջ ողբերգությունն այն է, որ օսմանյան իշխող դասակարգերին հաջողվեց հայերի անկախական ձգտումներով ահաբեկել քրդերին և նրանց վերնախավին հավաքել հայաջինջ քաղաքականության դրոշի շուրջ։

Ստեղծված վիճակը քննելու և գործողությունների պլան մշակելու համար Գելիեգուզանի Ռշկներ կոչված թաղում հրավիրվում է շարժման ղեկավարների ժողով[21]։ Այստեղ ռազմական գործողությունների ընդհանուր հրամանատար ընտրվեց Անդրանիկը։ Նա նաև պետք է ղեկավարեր Արևելյան Շատախի ճակատը, Հրայրը՝ հյուսիսային ճակատը, Գևորգը՝ հարավային և հարավ-արևմտյան ճակատը (Իշխանձոր-Տալվորիկ), Կոտոյի Հաճին՝ Զայի ճակատը։ Այսինքն, ինչպես նշում է ժամանակակիցը, այդ ժողովում Գևորգը ընտրվեց «զինվորական խորհրդի անդամ և զինվորական երկրորդ հրամանատար»[22]։ Ժողովը որոշում է. «...կռիվ տալ ճակատագրական, վերջին անհավասար մարտնչումների ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքից»[23]։

1904 թ. կռիվները հետևյալ ընթացքն ունեցան։ Մարտի վերջին Տիգրանակերտից ու Սղերդից եկած թուրքական զինվորական և ոստիկանական ու-

---

16 Դրոշակ, 1904, № 15։

17 Նույն տեղում։

18 Ք. Միքայելյան, Հեղափոխական մտքեր, ժնև, 1906, էջ 123։

19 Մ. Ավետեան, Յուշամատեան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 128։

20 Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագիր Աղան Տարոնցի, Հեղինակներ Տիգրան և Միսակ Ղեյաններ, Կահիրե, 1962, էջ 236։

21 Ավ., նշվ. աշխ., էջ 189։

22 Դրոշակ, 1907, № 9։

23 Զոր. Անդրանիկ և իր պատերազմներ, գրեց Արսեն Մուրադբեանը, Կ. Պոլիս, 1920, էջ 85։

ժերը, ինչպես նաև Հազոյի աշիրեթները միացյալ ուժերով գրավում են Խուլրի բնակավայրերը, դրանք թալանում ու ավերում։ Այստեղ նրանց միանում են նաև տեղական քրդերն ու երեք գումարտակ զորք։ Թշնամին շարժվում է դեպի Տալվորիկ և ուժեղ ճնշում գործադրում նրա հարավային և հարավարևելյան թևերի վրա։ Թուրքական ուժերի մի մասն էլ բարձրանում է Անդոկի փեշերը։ Ապրիլի 1-ին Գևորգի ղեկավարած պաշտպանության գիծն արդեն վտանգված էր։ Գևորգին հաջողվում է Հեղին գյուղում թշնամու գերակշիռ ուժերին հակահարված տալ ու հետ շպրտել, սակայն նկատի ունենալով, որ այդ շրջանը նոր հարձակումներից պաշտպանելը դժվար էր, նա խանքի հայկական գյուղերի բնակիչներին տեղափոխում է Իշխանձոր։

Շուտով մարտական գործողություններ են սկսվում նաև հյուսիսում։ Փետրվարի 5-ին տեղի ունեցավ Հունանի կռիվն ու կոտորածը[24], մի քանի օր անց՝ Տափքի դավադրությունն ու այդ գյուղի բնակիչ-քրդերի արտաքսումը։ Դրանց հաջորդեցին Տալավեի կռիվն ու բազմաթիվ այլ ընդհարումներ։ Սակայն խոշոր մարտերը տեղի ունեցան ապրիլի 11—13-ին (Շենիկում, Սեմալում, Ալյանքում և Ջայի հովտում)։

Թուրքական 20 հազարանոց բանակը հյուսիսային ռազմաճակատում դիրքեր էր բռնել 20 կմ երկարությամբ[25], այսինքն ռազմաճակատի ամեն մի մետրին բաժին էր ընկնում մեկ զինվոր և մեկ քուրդ։ Թուրքերը բոլոր ուղղություններով առաջ էին շարժվում դեպի Գելիեգուզան, որի վրա առաջին ընդհանուր հարձակումը տեղի ունեցավ ապրիլի 15-ին։ Գելիեգուզանը մինչև ապրիլի 22-ը հերոսական դիմադրություն ցույց տվեց թշնամու տասնյակ անգամ գերակշիռ ուժերին։ Հայերը գյուղը թողեցին միայն այն ժամանակ, երբ արդեն ռազմամթերք չունեին[26]։ Այդ կռիվների ընթացքում հայկական գյուղերի վրա նետվեց 1500 ռումբ։ Սակայն Սասունը շարունակում էր դիմադրել։ «Մինչև մայիսի 14-ը,—գրեցին եվրոպական թերթերը,—տասը օր շարունակ 200 հայ ապստամբներ Տալվորիկի ու Գելիեգուզանի միջև խիզախաբար մաքառում էին գերակշիռ ուժերի դեմ։ Նրանց հաջողվեց կամուրջ գցել, որպեսզի հնարավորություն տան անցնելու 150 ընտանիքների։ Այդ ժամանակ Մուշից եկան թուրքական օժանդակ ուժերը հրետանու հետ»[27]։

Թշնամուն ութ օր շարունակ համառ դիմադրություն ցույց տվեց Տալվորիկը։ Գրավելով Տալվորիկը, թուրքերը գազանային հաշվեհարդար տեսան։ «Կանանց խոշտանգում էին՝ կտրում նրանց կրծքերը, պատառոտում որովայնը, երեխաներին նստեցնում սրերի վրա, ծերերին՝ թրատում, կտոր-կտոր անում։ Սասունի շրջանն ամբողջովին ավերվեց և ամայացավ։ Մուշի հարթությունը ևս դարձավ հայության սպանդանոց»[28]։

Հայերի զանգվածային կոտորածները սկսվեցին ապրիլի 27-ից։ Սասունում սպանվեց 7773 հոգի։ 8854 հոգի մնաց անօթևան և առանց սննդի, այրվեց 2262 տուն[29]։ Ըստ մի այլ աղբյուրի, Սասունում 45 հայաբնակ գյուղեր «այրվել, քանդվել և փչացել են»[30]։

Սասունի ազգաբնակչության մի մասը հայդուկների ուղեկցությամբ իջնում է Դաշտ՝ ապավինելու Տարոնի հայությանը[31]։ Պարտիզանական ծանր կռիվներ մղելով դեպի Դաշտ են շարժվում նաև Անդրանիկն ու Գևորգն իրենց

---

[24] Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s. IV.

[25] Е. Саркисян, Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972, с. 213.

[26] ՀԽՍՀ Մամուլի պատմության կենտրոնական արխիվ (այսուհետև ՀԽՍՀ ՄՊԿԱ), ֆ. 43, ց. 1, գ. 47, թ. 10։

[27] Sassoun et les atrocites hamidiennes, Geneve, 1904, p. 32.

[28] ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ. 131, ց. 1, գ. 59։

[29] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 18, թ. 22։

[30] ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ. 131, ց. 1, գ. 60։

[31] Նույն տեղում, գ. 47, թ. 10։

ջոկատներով։ Ճանապարհին նրանք թուրքական բանակի հետ ընդհարումներ են ունենում Կուրտիկի փեշերին ու Գոմեր գյուղում և հաղթող են դուրս գալիս[32]։

Մշո կառավարիչ Հաֆըզ փաշան իր մոտ է կանչում քաղաքի հայ մեծամեծերին և ասում, թե սուլթանից հրաման է ստացել, որ, եթե հայդուկները Տարոնից հեռանան, ապա կոտորածներն ու հալածանքները կդադարեցվեն և հայերի համար կստեղծվի խաղաղ կյանքի հնարավորություն։ Մշո առաջնորդարանն ու դաշնակցական կոմիտեի ղեկավարներն ընկրկեցին և սկսեցին հայդուկներից պահանջել, որ նրանք հեռանան Տարոնից ու Սասունից։ Նրանց կարծիքով հայդուկները կարող էին Դաշտի հայության կոտորածի պատճառ դառնալ։ Կոմիտեն հայդուկներին գրում էր. «Կառավարությունը և զորաբանակը Դաշտի հոծ հայությանը ամբողջությամբ խեղդելու սև ծրագրեր են որոճում։ Անդարմանելի աղետ պիտի լինի, եթե խմբերը չհեռանան դեպի Վան... Երբ հեռանաք այդ լեռներից ու Դաշտից, մենք աղմուկով այդ իրողությունը պիտի հայտնենք ու թերևս, այդպիսով որոշ ժամանակ վտանգը հեռացնենք այս շրջաններից։ Օտար հյուպատոսների ներկայությունն էլ մեզ պիտի օգնի»[33]։ Այս նամակը ստանալուց հետո Անդրանիկը Գևորգին գրեց. «Մենք Նովասար վերադարձանք։ Կ. կոմիտեն խնդրում է, որ լեռները ապաստանենք, կամ անցնենք Ախլաթի շրջան։ Դաշտի վիճակը ծանր է։ Կապ պահենք իրար հետ թուղթիկ փոքր խմբերով և զգուշանանք նոր դեպքերից մինչև Մուրադի վերադարձը»[34]։ Այսինքն, Անդրանիկը նպատակահարմար էր համարում Մուշից ստացված խնդրանքը ժամանակավորապես կատարել մինչև Մուրադը Վանից վերադառնար և պարզ դառնար, թե Վանում ինչ վիճակ է տիրում և որքանով է նպատակահարմար Վասպուրական մեկնելը։ Բայց Անդրանիկի այդ քայլը հանդիպեց հայդուկների մի զգալի մասի դժգոհությանը և նա որոշեց խնդիրը դնել հայդուկների ժողովի քննարկմանը։ Այդ որոշմանը հանգելուց հետո նա նորից առաջինը Գևորգին է գրում. «Սիրելի Գևորգ. վերցրու խմբերը, Մշո դաշտի և Ավրանի վրայով բարձրացիր Տերիկ գյուղը, ուր իրար կգտնենք»[35]։ Մի քանի օր անց նա Գևորգին գրեց. «Դաշտում ձեր լինելը անհրաժեշտ է։ Շուտով Վահանն էլ է Դաշտ իջնելու»[36]։

Մանրիկի անտառում ժողովի է հավաքվում հայդուկության ծաղիկը, քննելու մեկ հարց՝ Տարոնից հեռանա՞լ, թե ոչ, և եթե հեռանալ, ապա ո՞ւր. Վա՞ն, թե՞ այլուր։ Տաք վեճեր եղան։ Տարոնից հեռանալու դեմ հատկապես ըմբոստանում էին վաստակաշատ հայդուկները, մասնավորապես տեղացիները։ Այդ թևը ղեկավարում էր Մակարը, որն իր խմբի հետ լքեց ժողովն ու հեռացավ։

Բուռն քննարկումից հետո ժողովը որոշեց ժամանակավորապես Սասունից հեռանալ։ Բայց հեռանալուց առաջ որոշվեց թշնամուն ևս մեկ հարված հասցնել։ Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Կուրավու գյուղում՝ հուլիսի 16-ին, որտեղ թուրքերը մոտ 100 մարդու կորուստ ունեցան[37]։ Երկրորդ բախումը տեղի ունեցավ օգոստոսի 11-ին՝ Շամիրամ գյուղում, որտեղ ևս թուրքերը մեծ կորուստներ տվեցին։ Հայդուկները գիշերը դատարկեցին Շամիրամը և շարժվեցին Դատվանի ուղղությամբ։ Նրանք տեղավորվեցին դատվանցիների նավակներում և ուղղություն վերցրին դեպի Ախթամար։ Թուրքերը ծովից ու ցամաքից պաշարեցին կղզին[38]։

Հայդուկների հետ հանդիպելու համար Վանից եկել էին դաշնակցական գործիչներ Իշխանն ու Վահան Փափազյանը (Կոմսը)։ Ախթամարի տաճարի

32 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 102։

33 Կ. Մասունի, նշվ. աշխ., էջ 447։

34 Նույն տեղում, էջ 454։

35 Նույն տեղում, էջ 457։

36 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 101։

37 Նույն տեղում, էջ 104։

38 ЦГВИА, ф. 450, оп. 1, д. 142 (1906), лл. 1, 19.

մոտ ժողովի հավաքվեցին։ Պարզվեց, որ Վանի գործիչները ամենևին էլ ուրախ չեն, որ հայդուկային այդ ստվար ու փորձված խումբը Վասպուրական է եկել։ Նրանք հայդուկներին առաջարկեցին Վասպուրականից հեռանալ և Պարսկաստանի վրայով անցնել Անդրկովկաս։ Ժողովում տաք վիճաբանություններ եղան։ Անդրանիկը Վանի դաշնակցական ղեկավարներին մեղադրեց վախկոտության ու անգործության մեջ, որը լուրջ վնաս հասցրեց Սասունի հայդուկային կռիվներին[39], Կոմսն ու Իշխանը չկարողանալով հիմնավոր պատասխան տալ այդ մեղադրանքներին, գերադասեցին հեռանալ ժողովից։ Իսկ Գևորգը հայտարարեց, որ ինքը վերադառնում է Սասուն։ Նրան միացան ևս 13 հայդուկներ։

Թուրքական զորամասերը շրջապատել էին լիճը։ Բարեբախտաբար մառախլապատ եղանակ էր։ Նավակն իր ուղղությունը կորցնում է և շարժվում դեպի Ախլաթ։ Գիշերը վրա էր հասել, երբ հաջողվեց մոտենալ Կծվակի ժայռոտ-ափին։ Հայդուկներն ափ ելան ու սկսեցին մագլցել ժայռն ի վեր։ Հանկարծ հենց դիմացից՝ մոտ 30 մետր հեռավորությունից, ուժեղ հրաձգություն սկսվեց։ Պարեկություն անող թուրքական զորքերն էին, որ շարժման ձայն առնելով՝ կրակ էին բացել։ Հայդուկներին հաջողվեց հուժկու հարվածով ցրել հակառակորդին և մագլցել Նեմրութի լանջերն ի վեր[40]։ Անլուր հալածանքներին ու խստություններին ենթակա ժողովուրդը, որ ֆիդայիների մեկնելուց հետո անձնատուր էր եղել սև հուսալքությանը, երբ իմացավ Գևորգի ներկայությունը իր մեջ, իր կողքին, իր մոտ, կրկին ունեցավ սփոփանքի թեթև սարսուռ, կրկին իր հոգու խորքում զգաց հույսի բաբախում։ Գևորգն էր՝ կեղեքիչների սարսափը։ Վերադառնալուց հետո Գևորգի շուրջը հավաքվեցին 70—80 հայդուկներ. «Թե որ մեռնել կա, էլ ինչո՞ւ մեռնել շղթան ձեռներիս։ Ավելի լավ չէ՞ մեռնել Գևորգի կողքին»[41]։

Սասունի ժողովուրդը վերադառնալով՝ գյուղերն այրված էր գտել։ Սասունցին ծվարել էր պատերի տակ ու վերականգնում էր քանդված օջախը։ Թուրքերին հաջողվել էր զինաթափ անել ոչ միայն Սասունի, այլև Դաշտի գյուղերի ազգաբնակչությանը։ Դաշտում հազարավոր մարդիկ, ամբողջ գյուղեր սրի էին քաշվել, ամենուրեք թալան ու ավերածություն էր։ Մասնավորապես լկտիացել էին ջանբեզարները։ «Քիչ են կարծես ժողովրդի ցավերը,— դրում էին Մուշից,—թուրք ջանբեզարների խումբն էլ սկսեց արյուն հոսեցնել։ Նրանք քաղաքում արդեն հրեշավոր կազմակերպություն ունեն, որի միակ նպատակը հայերին կոտորելն է»[42]։ Այդ ջոկատներում հիմնականում հավաքված էին բախտախնդիր, պորտաբույծ և ավազակային տարրեր։ Ջանբեզարները կառավարությունից ստանում էին բարձր աշխատավարձ, ձրի հագուստ, մտունդ և այլն։ Սուլթանը ազատագրական շարժումների դեմ պայքարում գործարքի մեջ էր մտել քրեական հանցագործների, ավազակների հետ։ Հայդուկներն իրենց գլխավոր հարվածը ուղղեցին ջանբեզարների դեմ։

1905 թ. Բերդակում հրավիրված հայդուկների ժողովում Գևորգն ասաց. «Մնացինք մենք, մեր գյուղը և մեր ալյուրը։ Պետք է գործենք այնպես ու այնքան, ինչքան որ մեր ալյուրը ջուր կվերցնի։ Սասունն ընկավ, մնացինք բաց Տարոնի ու Դուրանի մեջ, ամեն քայլափոխը մեկ-մեկ վանդ է, պետք է քուրդ բեկերի հետ հարաբերության մեջ մտնենք և ամեն կերպ աշխատենք նրանց մեր կողմը պահել»[43]։

Թուրքական զորքերի ու ոստիկանության բոլոր ջանքերը՝ Գևորգին ձեռք գցելու, անցան ապարդյուն։ Նա ուրվականի նման հայտնվում էր, հարվածում ու անհետանում։ Թուրքերը կատաղած էին, հուսահատված ու ամոթա-

---

39 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, էջ 111։

40 Դրոշակ, 1907, № 10։

41 Ռ ո ւ բ ե ն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Գ, Լոս-Անճելես, 1951, էջ 337։

42 Դրոշակ, 1906, № 10։

43 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 264—265։

հար։ Այդ օրերին Գևորգի մարտական գործողություններից ամենափայլունը Խարս գյուղի կռիվն էր[44]։

Հայդուկները Սասնո լեռներում այլևս թաքուն չէին գործում։ Մառնիկում նրանց ճամբարն էին գալիս Սասունի տարբեր գյուղերից, բողոքում, հրահանգներ ստանում, իրենց ծառայությունն առաջարկում։ Այստեղ գալիս էին նաև քրդեր ու քուրդ ցեղապետեր՝ Գևորգին տեսնելու, նրա հետ խորհրդակցելու, պայմանավորվելու։ Մառնիկի լեռան փեշի բացատը դարձել էր հայդուկների շտաբը։

Դեմոկրատական-հեղափոխական տրամադրությունների աճի, ինչպես նաև հայդուկների ջանքերի շնորհիվ 1905 թ. հայ ազգաբնակչության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները որոշ չափով մեղմացան։

1906 թ. սկսվեց հայդուկների ակտիվ գործողություններով։ Տակտիկական պլանը նույնն էր՝ արագ տեղափոխություններ, շեշտակի հարվածներ։ Փոքր խմբերի բաժանվելով հայդուկները տարածվեցին Սասունի ու Տարոնի ամբողջ տարածքով և որտեղ հանդիպում էին թուրքական ուժերի, շեշտակի հարված էին հասցնում ու հեռանում։

Բայց 1905—1906 թթ. ոչ միայն հայդուկային շարժման ամենածավալուն, այլ նաև ներքին հակասությունների ու պառակտումների շրջան էր, որը վերջին հաշվով հանգեցրեց այդ շարժման անկմանը։ Ո՞րն էր պատճառը։ Արդեն տասը տարի Գևորգի և դաշնակցության բյուրոյի ու նրա Գուրան-Բարձրավանդակի կոմիտեի միջև պայքար էր մղվում հայդուկային շարժման լինել-չլինելու շուրջ։ Այդ պայքարի ընթացքում Գևորգը երկու անգամ արտաքսվեց Սասունից, մեկ անգամ Սասունից դուրս հանվեց հայդուկային շարժման կորիզը։ Շարժման ու նրա ղեկավարների նկատմամբ կիրառվում էին վարկաբեկելու և ահաբեկելու զանազան միջոցներ։

Հայդուկային շարժման վերացումը, ինքնապաշտպանական ջոկատների վերածելը դաշնակցական կոմիտեներին կից գործող մարտական խմբերի և պայքարի մեթոդների առումով Տարոնում Վանի մի տարբերակի ստեղծումը դաշնակցության ղեկավարների համար ձեռք բերեցին սկզբունքային նշանակություն և նրանք միջոցների ու հնարավորությունների առաջ կանգ չէին առնում՝ այն իրականացնելու համար։ Մեկը մյուսի հետևից Սասուն էին ուղարկվում դաշնակցական կուսակցության աչքի ընկնող գործիչներ (Վահան, Վարդգես, Գուրգեն), օգտագործում էին տեղի դաշնակցական գործիչներին (Հրայր, Վարդան վարդապետ, Տատրակ), բայց ապարդյուն։ Հայդուկային շարժումը ոչ միայն ապրեց, այլև աննախադեպ ծավալ ու թափ ընդունեց։ Դրանից հետո շարժումից հեռացան դաշնակցականների կողմից ուղարկված գործիչները։ Վերջինը Կորյունն էր, որը հեռացավ 1905 թ., Գևորգին թողնելով հետևյալ երկտողը. «Սիրելի Գևորգ, ես գնացի»։ Կարդալով այդ երկտողը, Գևորգը դառնացած ասաց. «Կորյունին վաղուց դուր չէր գալիս իմ գործելակերպը։ Նա պահանջում էր հեռու մնալ ինքնապաշտպան կռիվներից և սպասել։ Սպասել, երբ նույնիսկ աչքիդ առաջ խոշտանգում, թալանում ու սպանում են հայ գյուղացուն։ Կորյունը մնացածների նման հեռացա՞վ, թե փախավ արյան մեջ շաղախված մեր այս երկրից»[45]։

1906 թ. կեսերին Սասուն հասավ դաշնակցական ևս մի գործիչ՝ Ռուբեն Տեր-Մինասյանցը։ Վ. Իսկանդարյանը, որ 1906 թ. դաշնակցական բյուրոյի հանձնարարությամբ գնացել էր Երկիր, գրում է. «Հետագայում մեր խոսակցությունների ընթացքին ես և Ռուբենը պարզեցինք. ես՝ Հ. Հ. Դաշնակցական Արևելյան բյուրոյի, իսկ նա՝ տեղական ընկերների տեսակետները։ Ռոստոմը, Սիմոնը և Համոն (բժ. Օհանջանյան) շարունակ պնդել էին և ինձ էլ պատվիրել, որ աշխատենք Գևորգին համոզել, նա միառժամանակ թողնի Երկիրն ու անցնի Կովկաս...

---

44 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 367։

45 Նույն տեղում, էջ 591։

Պետք էր, որ նա Կովկասում միառժամանակ շրջանների մեջ մաներ։ Ամենքն էլ համոզված էին, որ այդ հանգամանքը շատ բարերար ազդեցություն պիտի թողներ նրա բնավորության, գազազած հոգու և աշխարհայացքի վրա։ Մյուս կողմից՝ նրա և փախստական տղոց մեծ մասի հեռանալով, Դաշտի մեջ զինված ընդհարումների շարժառիթները կպակասեին։

Ռուբենը ճիշտ և ճիշտ նույն առաքելությամբ եկել էր Վանից։ Այդ հողի վրա շարունակ պայքարել էր խոսքով և օրինավոր որոշումներով, սակայն միշտ հանդիպել էր Գևորգի համառ դիմադրությանը...

Գևորգը մի համոզում ուներ, որ Մշո դաշտը, եթե առանց հայդուկի մնա, հայ թե թուրք դավաճանական ու դավադրական տրամադրություններն ազատ թևածելու հնարավորություն կստանան։ Նման պարագայում ժողովուրդը իր գլուխը պիտի կորցներ և կուլ գնար սև ուժին։ Նա կարծես չէր ուզում տեսնել, որ իրենից հետո Երկրում մնում էր նախ՝ Ռուբենը։ Վերջապես Դաշտի մեջ կարող էին մնալ ժողովրդի սիրած հայդուկներից մի քանի հոգի՝ կազմակերպության հմայքը տեղը պահելու համար։ Մնում էր հայ-քրդական բարեկամության խնդիրը, որ Գևորգի ներկայության կարևորությունը շեշտող ազդակներից մեկն էր նկատված...

Պետք էր խոշոր խաչ դնել այդ «հայ-քրդական» ցնորքի վրա»[46]։

Իր քայքայիչ վարքագիծն արդարացնելու համար Ռուբենը հայդուկներին վերագրում է արարքներ, որոնք վարկաբեկիչ են ոչ միայն այդ շարժման համար, այլև ստվեր են գցում հայ գյուղացու նվիրվածության և անձնազոհության վրա։ Ռուբենը գրում է. «Գևորգը ստիպված էր այդ դժոխք երկրի մեջ ոչ միայն դիմագրավել թշնամու հալածանքներին, այլև շարունակ տանջվել ֆիդայիների գազանութենեն», որ հայդուկների թվի փոքրացման շնորհիվ ներքին տարաձայնությունները վերացան և տաս օր անց «Գևորգը կամաց բոլոր գործերը կգցե իմ վզիս»[47]։

Սա, մեղմ ասած, կեղծիք է, որ նպատակ ունի ոչ միայն արդարացնելու իր կուսակցության սխալ քաղաքականությունը, այլև լուսապսակով շրջարշելու սեփական անձը, հագուրդ տալու սեփական փառամոլությանը։ Իսկ իրականությունն այն է, որ Գևորգը վճռականապես հրաժարվեց դաշնակցական կուսակցության գործերով զբաղվելուց և պահանջում էր հայդուկային խմբերի ու ինքնապաշտպանության ջոկատների ինքնուրույնություն։ Ռուբենն ինքն է խոստովանում, որ Գևորգը կուսակցական աշխատանքներով զբաղվելու ոչ մի ցանկություն չուներ[48]։

1907 թ. մայիսի 25-ին Գևորգն ու իր ջոկատը մտան Սուլուխ գյուղ[49]։ Մինչև մայիսի 26-ի վերջալույսը Սուլուխում հավաքվեց 84 հայդուկ։ Հաջորդ օրը սուլուխցի Մեսրոպի տանը ջուր տաքացրին, լողացան, խորոված պատրաստեցին և ուրախ կատակներով անհոգ նախաճաշում էին։

Նախաճաշը շարունակվում էր, երբ տանտերը գունատված ներս ընկավ ու բղավեց, թե Մուշից զորք է գալիս, անհամար թվով զորք։ Գևորգը վերցնելով հեռադիտակը բարձրացավ կտուր և այն, ինչ տեսավ, ցնցեց նրան։ Խուփերի դաշտը սևացել էր սևազգեստ թուրքական բանակից, որը մորեխի պես շարժվում էր դեպի Սուլուխ։ Հարձակվող զորամասի առջևից գալիս էր Քյոսա Բինբաշին։ Թուրքական զորամասն այնքան էր մոտեցել, որ այլևս անհնար էր գյուղից հեռանալ և խուսափել ճակատամարտից, որովհետև հինգ հազար քրդեր իրենց հերթին արևելքից, հարավից ու հարավ-արևմուտքից շրջապատել էին Սուլուխը և սպասում էին Բինբաշու հրամանին։

Ուրեմն՝ ճակատամարտ։ Գևորգի ուղեղը տենդագին աշխատում էր, որոշում պաշտպանության գիծը և հայդուկների ու գյուղի զինված ջոկատների

---

46 Ավ ո, նշվ. աշխ., էջ 346—347։

47 Ռ ու բ ե ն, նշվ. աշխ., հ. Դ, Լոս-Անճելես, 1952, էջ 138—143։

48 Կ. Ս ա ս ս ո ւ ն ի, նշվ. աշխ., էջ 610։

49 Նույն տեղում, էջ 652։

տեղադրման կետերը։ Ու երբ նա կտուրից վայր իջավ, պաշտպանության մանրամասն սխեման արդեն լրիվ պատրաստ էր։ Եվ առանց ժամանակ կորցնելու նա սկսեց հրահանգներ ու հրամաններ տալ։

Թուրքական վաշտերը մոտենում էին։ Նրանք արդեն 100 մետր հեռավորության վրա էին, երբ պայթեց Գևորգի հրացանը։ Բոլոր հայդուկները միաժամանակ կրակ բացեցին խիտ շարքերով առաջ եկող թուրքական վաշտերի վրա։ Թուրքերի մի մասը ճանապարհից դուրս եկավ ու պատսպարվեց փոսերի մեջ, քարերի ու թփերի հետևը։ Ոմանք շփոթված վազեցին դեպի գյուղ և թաքնվեցին պատերի տակ, իսկ հիմնական մասը հետ շրջվեց, հեռացավ ու դուրս գալով կրակի գոտուց, դիրքեր գրավեց։

Օրվա երկրորդ կեսին լսվեց թուրքական բանակի փողերի կանչը, և Քյոսա Բինբաշին երկրորդ անգամ հարձակման տարավ իր զորամասերը։ Այս անգամ թուրքերն առաջ էին շարժվում ոչ թե զորասյուներով, այլ ցրված մարտակարգով՝ վազք-փորսող սկզբունքով։ Սկսվեց կատաղի ճակատամարտ։ Թուրքերը մեծ զոհեր էին տալիս, բայց համառորեն առաջ էին շարժվում։ Քյոսա Բինբաշին արդեն Քյուչուկի տան պատի տակ էր, երբ գետին տապալվեց։ Թուրքերի մի մասը նրա մարմինը վերցրած հետ գնաց, իսկ մյուսները առաջ շարժվեցին ու մտան հայդուկների դասավորության մեջ։

Գևորգի կողքին կռվում էր Գալեն։ Հանկարծ նրա հրացանը դադարեց կրակելուց։ Գևորգը շուռ եկավ դեպի նա։ Իր հայդուկային պատանեկության ընկերը՝ Գալեն սպանված էր։ Նա հանձնարարեց Գալեի դիակը իջեցնել Քյուչուկի ախոռը, իսկ ինքը շարունակեց կրակել։ Բայց հանկարծ դադարեց կրակելուց նաև նրա հրացանը։ Զսպանակը փչացել էր։ Նա ծունկը գետին իջեցրեց և փորձեց կարգի գցել հրացանը։ Այդ ժամանակ մի գնդակ անցնելով Գևորգի «աջ թիկունքից խոցվեց նրա ծնկի մեջ»։ Գևորգը մի կերպ կտուրից վայր իջավ, մտավ ախոռ ու գիտակցությունը կորցրած ընկավ զոհված ընկերոջ կողքին[50]։

Հայդուկներն ու սուլուխցիները մինչև երեկո հետ մղեցին թշնամու գրոհները, իսկ մութն ընկնելուն պես թողեցին իրենց դիրքերը և վերցնելով Գալեի դիակն ու վիրավոր Գևորգին՝ հեռացան Արածանիի ուղղությամբ։

Շենիկցի Մանուկը վեր բերեց Գալեի դիակը, համբուրեց նրա ճակատը և հետո հանձնեց Արածանիի ջրերին։ Նույն բանն արեցին նաև Հագոյի ու Հասանոյի դիակների հետ։ Վիրավոր Գևորգին կապեցին ձիու թամբին ու Մուրադ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ շարժվեցին դեպի Շաշլախտախ գյուղը։ Այստեղ Գևորգին դրեցին եղեգնուտում, կանաչ թփերով ծածկեցին, երեք սուլուխցու ապսպրեցին հսկել նրան, իսկ իրենք գետն անցնելով հեռացան։

Հաջորդ օրն իր զորախմբով այստեղից անցնելիս քրդական ցեղապետ Զայնալ բեկը տնքոց է լսում։ Գնում է ձայնի ուղղությամբ, խոտը հեռացնում ու տեսնում ջուր խնդրող հայդուկի մեռնող դեմքը։

Նա Գևորգին իսկույն ճանաչում է և անմիջապես հանձնարարում գդակով Արածանիից ջուր բերել։ Զայնալը Գևորգի գլուխը բարձրացնում է և գդակով ջուրը մոտեցնում նրա շուրթերին. հենց այդպես, քուրդ ցեղապետի ձեռքերի վրա էլ Գևորգը մեռնում է։

Սուլուխի ճակատամարտի և Գևորգի սպանության մասին հիմնական գրավոր աղբյուրը Ռուբենի «Հայ հեղափոխականի մը հիշատակները» գիրքն է։ Սակայն այս իրադարձությունների մասին այդ աղբյուրի և ճակատամարտի մասնակիցների պատմածների միջև լուրջ հակասություններ կան։

Նրանք անհնար էին համարում, որ տանիքին գտնվող Գևորգի վրա ներքևից կրակելիս գնդակը կպներ նրա աջ թիկունքին և միաժամանակ ջարդեր ծունկը։ Եթե ընդունենք, որ գնդակը սկզբում կպել էր ծնկին և ապա մտել կրծքի աջ վանդակը, ապա ծնկի ոսկորների ջախջախված լինելու փաստը բացառում

50 Նույն տեղում, էջ 657։

է նաև այդ հավանականությունը, մանավանդ, որ գնդակը Գևորգի մարմինը ծակել-անցել էր։

Այսինքն, անպատասխան են մնում այն հարցերը, թե ինչպե՞ս և ո՞ւմ գնդակից վիրավորվեց Գևորգը։

Գևորգի վերքը մահացու չէր և ինչպես մշեցի Ռուբենն էր ասում՝ նման վերքով նա կարող էր 1—2 շաբաթից ոտքի կանգնել։ Գևորգը մեռավ արյունաքամ լինելուց, այլ խոսքով անուշադրությունից։ Իսկ ինչո՞վ բացատրել այդ անուշադրությունը հայդուկային առաջնորդի նկատմամբ։ Խոսքը սովորական անուշադրության, թեժ մարտերի պատճառով օգնելու անհնարինության, թե՞ դիտավորության մասին է։ Հարցեր, որոնք դժբախտաբար որոշակի պատասխան չունեն։

Ռուբենը գրում է, որ երբ Գևորգին դրեցին եղեգնուտների մեջ, նրան պաշտպանելու ու խնամելու համար թողեցին երկու սուլուխցու, իսկ ըստ Կարո Սասունու, թողեցին մեկ մարդու՝ սուլուխցի Միհրանին։ Մեկ այլ հեղինակ գրում է, որ թողեցին երեք հոգու։ Բայց փաստորեն, երբ Զայնալի խումբը եղեգնուտ մտավ, Գևորգի մոտ ոչ ոք չկար։ Ո՞ւր կորան, այդ պահապանները։ Ըստ ոմանց, նրանք գիշերը գնացել էին Գևորգին գյուղ տեղափոխելու միջոցներ գտնելու։

Զայնալ բեկի հեռանալուն պես այնտեղ հայտնվեց թուրքական մի ջոկատ։ Նրանք Գևորգի դիակը սայլի վրա դրեցին և հաղթական շեփորներ հընչեցնելով շարժվեցին հյուսիս՝ թանկարժեք ավարն իրենց տիրոջը հասցնելու համար։ Մահվան թափորը դեռ չէր մոտեցել Մուշ քաղաքին, երբ նրան ընդառաջ եկավ զինվորական կայազորի փողային նվագախումբը՝ մի վաշտի ուղեկցությամբ։ Այդ նույն նվագախումբն ու վաշտը մասնակցել էին Քյոսա Բինբաշու թաղմանը։ Նվագախմբի ու զինվորական ջոկատի ուղեկցությամբ Գևորգի աճյունը քաղաք բերվեց և դրվեց հրապարակում։ Երեք օր շարունակ քաղաքի ազգաբնակչությունը նրան հրաժեշտ էր տալիս և ապա զինվորական բոլոր պատվածեսերով, Շոպենի երաժշտության ուղեկցությամբ նրան թաղեցին Սաչկի դուրանի վրա գտնվող Կողու թաղի գերեզմանատանը։

Գևորգի համար բնութագրական դարձան հետևյալ խոսքերը. «Միշտ ժողովրդի մեջ, միշտ ժողովրդին կպած»՝ այդ էին նրա մարտական տենչը, նրա գործելակերպը, անսպառ աղբյուրն այն անվախության ու անվեհերության, որոնցով նա ապրեց, փայլեց ու վերջին րոպեին... այրվեց։

Տարոնի ու Սասունի տանջանքն ու մաքառումն իր աչքով տեսավ, իր ականջով լսեց հարազատ երկրի փրկություն կանչող վշտոտ աղաղակը և այդ վիշտն ու տանջանքը նրա հերոսության հնոցը եղան, ոգեշնչողները և մղողներն այն ձեռնարկների, որոնցում նա փայլեց որպես ղեկավար ու հայդուկապետ, իբր վրիժառու ու մարդասեր։

Երբեք թիկունք չդարձրեց, երբեք ձեռքը չառավ տարագրի ցուպը, չկրտրվեց մայր հողից ու ժողովրդից։ Աչքերն Անդոկին հառած նա մնաց մեծ՝ իր հավատով ու հավատարմությամբ, իր անսասան կամքով ու պատանեկան սիրով։

Հերոս՝ թշնամու դիմաց, Գևորգը հերոս մնաց և մահվան հանդեպ։ Մի խելահեղ անվախ, անտարբեր՝ զգուշության կոչերի նկատմամբ, նա հարազատ ժողովրդին կտակեց արհամարհանք մահվան նկատմամբ և տիտանական ուժի դրևորում՝ վտանգի ու մեծագործությունների կատարման ժամանակ։

ГЕВОРГ ЧАУШ

С. К ПОГОСЯН

Резюме

Политика геноцида Османской Турции по отношению к армянскому народу вызвала сопротивление западных армян, которое в послед-

ние десятилетия XIX в. обрело характер вооруженной борьбы. Ударной силой этой борьбы было движение гайдуков, среди которых, наряду с Арабо, Грайром, Ахпюр Серобом, Андраником, Ростомом и др., своей деятельностью выделялся народный герой Геворг Чауш. Биография Геворга как гайдука в определенном смысле отражает историю движения фидаинов Тарона. Это движение по своему характеру было крестьянско-демократическим. Гайдуки были народными мстителями и боролись за право армян на существование.

Героическая биография Геворга Чауша совпадает с периодом возникновения и подъема движения фидаинов. Он был талантливым бойцом, тактиком, пользовался всенародной любовью. Всю свою сознательную жизнь Геворг Чауш посвятил движению народных повстанцев.

GEVORG CHAOOSH

POGHOSIAN S. H.

S u m m a r y

Ottoman Turkey's genocidal policy regarding Armenians brought on West Armenians' resistance which grew into an armed struggle in the 19th century. The striking force of that struggle was the guerrilla (haidook) movement; and the popular hero Gevorg Chaoosh occupies. by his activity, a unique place among well-known participants such as Arabo, Hrire, Aghbyoor Serob, Andranik, Rostom and others. The biography of Gevorg. as a guerrilla reflects, in a certain sense, the history of the partisan movement of Taron. That movement had the nature of peasant democracy. The guerrillas were popular avengers and fought for the persistence of the people.

Gevorg Chaoosh's heroical biography coincides with the origine and advance of the guerrilla movement. He was a talented warrier and a battle leader, and he enjoyed the love of the entire people. Gevorg Chaoosh devoted his entire conscious life to the cause of his people's struggle.